«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 64§3 «09» 04, 2022թ.

ԵՊՀ ԻՄ-Ի ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) Ուսումնամեթոդական վարչության պետի 09.04.2022 զեկուցագիրը՝

Հրամայում եմ.

1. Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի վերաբերյալ մասնագիտական ամբիոնների փաստաթղթավարության ներքին աուդիտ իրականացնող աշխատանքային խմբի ծրագիրը՝

Փաստաթղթային հիմքեր.

1.1. ամբիոնի աշխատանքային պլան- ժամանակացույց,
1.2. ամբիոնի մտից – ելից փաստաթղթաշրջանառության գրանցամատյաններ,
1.3. տնօրենի, ֆակուլտետի դեկանի հրամաններ, որոշումներ, նիստերի արձանագրություններ,
1.4. «SuperVision» ծրագրով իրականացվող աշխատանքներ (ուսումնական պլաններ, աշխատանքային ուսումնական պլաններ, դասախոսների անհատական բեռնվածություններ և այլն),
1.5. ավարտական աշխատանքներին վերաբերող փաստաթղթեր,
1.6. ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրեր,
1.7. դասընթացներին և քննաշրջանին վերաբերող փաստաթղթեր,
1.8. դասամատյանների վարմանը և հաշվետվողականությանը վերաբերող փաստաթղթեր,
1.9. լրացուցիչ պարապմունքների, փոխադարձ դասալսումների, ամբիոնի վարիչի և/կամ պրոֆեսորի կողմից իրականացվող դասալսումների գրաֆիկ,
1.10. դասացուցակների փոփոխություններին առնչվող փաստաթղթեր,
1.11. վերականգնված ուսանողների տարբերությունների գրաֆիկներին համապատասխան խորհրդատվությունների ժամանակացույցներ,
1.12. 2022-2023 ուսումնական տարվա կամընտրական դասընթացներին ցուցակագրված ուսանողների թիվն՝ ըստ դասընթացների,
1.13. էլեկտրոնային հասցեների միջոցով ամբիոնի դասախոսների և ուսանողների իրազեկում (հրամաններ, որոշումներ, ժամանակացույցներ և այլն),
1.14. առաջին կիսամյակում ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

2.Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել Ուսումնամեթոդական վարչության պետին (խմբի ղեկավարին), ֆակուլտետների դեկանների ժամանակավոր պաշտոնակատարներին, ամբիոնների վարիչների ժամանակավոր պաշտոնակատարներին, խմբի անդամներին:

3.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ